Հավելված
Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
2022 թվականի հունվարի 27-ի թիվ 13-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս 3
2. Ամփոփագիր..... 5
3. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները 10
4. Անհամապատասծանությունների վերաբերյալ գրառումներ.....19
5. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր 21
6. Եզրակացություններ..... 26
7. Առաջարկություններ 29

I. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 256-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի թիվ 2215-Ն որոշում ՀՀ կառավարության 13.05.2021 թվականի թիվ 785-Լ որոշում ՀՀ կառավարության 24.09.2021 թվականի թիվ 1559-Ն որոշում ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի թիվ 33 արձանագրային որոշում ՀՀ կառավարության 20.07.2020 թվականի թիվ 1144-Լ որոշում ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի թիվ 1937-Ն որոշում ՀՀ կառավարության 17.10.2002 թվականի թիվ 1678-Ն որոշում ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/73/19739-2020 գրություն
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը:
Հաշեքննության կատարման ժամկետը	2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև 2022 թվականի հունվարի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, ՀՀ պետական բյուջեի 3,6,9 ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշ-վեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը	Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լ. Յոլյանը:

II. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե) 2021 թվականի պետական բյուջեի տարեկան ճշտված պլանը կազմել է 33,886,825.07 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2021 թվականի ինն ամիսների) ճշտված պլանը կազմել է 30,185,289.07 հազ. դրամի չափով, ֆինանսավորումը՝ 19,162,221.58 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 19,289,623.89 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 18,871,929.93 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը կատարվել է 63.90%-ով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ՝ ելնելով նշանակալի հոդվածների նվազագույն ծածկույթից, ընդգրկվել են «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի հետևյալ չորս միջոցառումները՝ 12,287,440.59 հազ. դրամ ընդհանուր գումարով:

- ✓ «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում»
- ✓ «Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը»
- ✓ 31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում»,
- ✓ «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում»:

Հաշվեքննությամբ ընդգրկված միջոցառումների գծով արձանագրվել են հետևյալ հիմնական ցուցանիշները՝

- ➢ «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 2021 թվականի տարեկան պլանը կազմել է 2,856,008.0 հազ. դրամ, նույնքան կազմել է նաև ինն ամիսների ճշտված պլանը: Հաշվետու ժամանակահատվածի ֆինանսավորումը, փաստացի ծախսը, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 2,842,212.08 հազարական դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ կազմել է 99.5%:
- ➢ «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 2021 թվականի պետական բյուջեի պլանը կազմել է 1,795,808.6 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 4,531,557.90 հազ.դրամ, նույնքան կազմել է հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը: Հաշվետու ժամանակահատվածի ֆինանսավորումը, փաստացի ծախսը, փաստը (դրամարկղային ծախսը)՝ կազմել է

3,867,775.04 հազարական դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ կազմել է 85.35%:

➢ «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող «Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառման «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով ծախսը նախատեսվել է 1,107,979.4 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 892,144.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 663,328.9 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 596,982.67 հազ. դրամ: Փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ կազմել է 85.80%:

➢ «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 4,714,169.90 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 1,004,338.90 հազ. դրամ, փաստացի ծախսը 3,750,050.89 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 2,836,057.14 հազ. դրամ: Փաստացի ծախսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 79.55%:

Ըստ առանձին միջոցառումների՝ հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չի ապահովվել ինչպես 2021 թվականի ինն ամիսների ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծախսերի, այնպես էլ միջոցառումների կատարումը՝ հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ, փաստացի ծախսը կատարվել է 63.90%-ով, իսկ նախատեսված 38 միջոցառումներից 8-ը չեն իրականացվել:

2. ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված՝ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի 8-րդ կետի «ե» ենթակետով սահմանվել է, որ սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագրում պարտադիր պետք է ներառվեն արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքի, կատարվող աշխատանքի ու մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գինը, պայմանագրի շրջանակներում արտադրման, ներմուծման կամ արտահանման ենթակա ապրանքների, կատարման ենթակա աշխատանքների ու մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակի և դրա փոփոխման պայմանների վերաբերյալ դրույթներ, որի կատարումը ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չի ապահովվել՝ ՋՕԸ-երի հետ կնքված ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրերում պահանջվող դրույթները չեն ներառվել:

3. 11002 և 12001 միջոցառումների շրջանակում ՋՕԸ-երին սուբսիդիայի տրամադրման պայմանագրերում չի ամրագրվել մատուցվող ծառայության

նվազագույն շահավետ գնի ցուցանիշը, ինչը թույլ չի տալիս գնահատել ՋՕԸ-երին տրամադրվող ֆինանսական աջակցության չափաքանակների հիմնավորվածությունը և դրանց օգտագործման արդյունավետությունը: ՋՕԸ-երին ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրերի 2.3. կետում որպես պայման նշված է, որ Ընկերությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է 2021 թվականի եկամուտների և ծախսերի շրջանակներում նախատեսված կանխատեսումային ցուցանիշներով: ՋՕԸ-երի հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տվել, որ վերջիններս չեն կատարում այդ պայմանն ինչպես սեփական եկամուտների, այնպես էլ ծախսային մասով: 2021 թվականի ինն ամիսների տվյալների համաձայն՝ ՋՕԸ-երի կողմից ջրօգտագործողներին մատակարարված 528,109.9 հազ. խմ ջրի դիմաց հասույթը կազմել է 5,809,208.6 հազ. դրամ, իսկ փաստացի գանձումները (ներառյալ անդամավճարները)՝ ընդամենը 2,837,285.8 հազ. դրամ, կամ նախատեսվածի 48,8%-ի չափով: Ընդամենը հաշվետու ժամանակահատվածում ՋՕԸ-երը չեն հավաքագրել 2,971,922.8 հազ. դրամ, իսկ պետական ֆինանսական աջակցությունը կազմել է 6,709,987.1 հազ. դրամ: Արդյունքում, ՋՕԸ-երի գործունեության ցածր արդյունավետությունը հանգեցրել է նախատեսված եկամուտները չապահովելու հետևանքով առաջացած ճեղքվածքի փակման համար պետական բյուջեից հավելյալ միջոցների ներգրավմանը: ՋՕԸ-երի պետական ֆինանսական աջակցության արդյունավետության գնահատման բացակայության մասին է վկայում նաև այն, որ 2021 թվականի պետական ֆինանսական աջակցությունը նրանց բյուջեներով նախատեսված ֆինանսական ճեղքվածքը 1,114,803.2 հազ. դրամով գերազանցվելու պայմաններում, ինն ամիսների արդյունքներով ՋՕԸ-երի կրեդիտորական պարտքերն ավելացել են 1,753,381.9 հազ. դրամով՝ 01.10.2021 թվականի դրությամբ կազմելով 3,629,720.3 հազ. դրամ, իսկ դեբիտորական պարտքերը՝ 26,591,223.8 հազ. դրամ:

4. «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառումների շրջանակներում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և ՋՕԸ-երի միջև կնքված սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի համաձայն՝ սուբսիդիայի գումարները պետք է ուղղվեն նրանց ընթացիկ գործունեության ֆինանսական ճեղքվածքի մարմանը, մինչդեռ 2021 թվականի հարկային պարտավորությունների մարմանն ուղղվել է նաև 2020 թվականի դեկտեմբերին «Տավուշ» ՋՕԸ-ին այդ նպատակով հատկացված սուբսիդիայի 19,766.37 հազ. դրամ ազատ մնացորդը:

5. Չի ապահովվել ՀՀ կառավարության 17.10.2002 թվականի «ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհուրդ ստեղծելու, խորհրդի կանոնադրությունը հաստատելու և գործադիր մարմնի մասին» թիվ 1678-Ն որոշման 2-րդ հավելվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջի կատարումը՝

համաձայն որի ՋՕԸ-երի գործունեությունը համակարգող կանոնակարգող խորհուրդը, որի գործադիր մարմինն է հանդիսանում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն, պետք է քննարկեր ՋՕԸ-երին տրամադրվող ֆինանսական աջակցության չափաքանակներն ու դրանց օգտագործման արդյունավետությունը:

6. ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշման համաձայն՝ «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման մասով սահմանվել են միջոցառման արդյունքի չափորոշիչները, իսկ «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման մասով դրանք չեն սահմանվել, այն դեպքում, երբ նշված երկու միջոցառումների շրջանակներում ֆինանսական աջակցության գումարներն ուղղվում ու ծախսվում են նույն ընթացակարգով և նույն նպատակի համար՝ ՋՕԸ-երում առաջացող ընթացիկ պարտքերի մարման համար և առանց դրանց ուղղվածությունը տարբերակելու: Այս պարագայում հասցեական և ծախսային միևնույն բնույթի ֆինանսական աջակցությունը տրոհվել է երկու բյուջետային միջոցառումների միջև: Արդյունքում, ՋՕԸ-երի 2021 թվականի պետական ֆինանսական աջակցության գումարը 1,144,803.2 հազ. դրամով գերազանցում է ՋՕԸ-երի բյուջեներով նախատեսված ճեղքվածքը:

7. ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 20-ի թիվ 1144-Լ որոշմամբ հաստատվել է Ոռոգման համակարգի ֆինանսական առողջացման աջակցության ծրագիրը, որի հիմնական ուղղվածություններից է ոռոգման համակարգի շահագործման ծախսերի կրճատումը, մինչդեռ 2020 թվականին ՋՕԸ-րի տարեկան 11,136,941.3 հազ. դրամ ծախսերի պարագայում 2021 թվականի ինն ամիսների փաստացի ծախսերն արդեն իսկ գերազանցվել են՝ կազմելով 11,170,145.2 հազ. դրամ:

Լ. Յոլյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ
…. 01.2022թ.
ՀՀ հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան, 19 փողոց, ք. Երևան, Հայաստան

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի 2021 թվականի պետական բյուջեի տարեկան ճշտված պլանը կազմել է 33,886,825.07 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2021 թվականի ինն ամիսների) ճշտված պլանը հաստատվել է 30,185,289.07 հազ. դրամի չափով, ֆինանսավորումը կազմել է 19,162,221.58 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 19,289,623.89 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 18,871,929.93 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում՝ ճշտված պլանի նկատմամբ, փաստացի ծախսը կատարվել է 63.90%-ով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի ինն ամիսներին նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 38 միջոցառում, որից 8-ը չի իրականացվել:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ՝ ելնելով նշանակալի հոդվածների նվազագույն ծածկույթից, ընդգրկվել է ստորև ներկայացված աղյուսակում բերված չորս միջոցառում՝ 12,287,440.59 հազ. դրամ ընդհանուր գումարով:

Հաշվեքննությամբ ընդգրկված նշանակալի հոդվածների վերաբերյալ

հազ. դրամ

N	Ծրագիրը, միջոցառումը		Հոդվածը		Փաստը
1	1004 11002	Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում	452100	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական կազմակերպություններին	2,842,212.08
2	1004-12001	Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը	452100	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական կազմակերպություններին	3,867,775.04
3	1004-31001	Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում	511200	Շենքերի և շինությունների շինա-րարություն	2,741,396.33

4	1004-31005	Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում	511200	Շենքերի և շինությունների շինա-րարություն	2,836,057.14
ԸՆԴԱՄԵՆԸ					**12,287,440.59**

ԾՐԱԳԻՐ՝ «1004 Ոռոգման համակարգի առողջացում»
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում»

Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև 2015 թվականի հոկտեմբերի 16-ին ստորագրվել է Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից «Ոռոգման համակարգերի արդիականացման» ծրագրի ֆինանսավորման ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ 40,000.0 հազ. ԱՄՆ դոլար արժեքով: Ըստ Համաձայնագրի հավելված 5-ի ծրագրի նպատակներն են՝

- ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացում,
- ոռոգվող հողերի մակերեսի ընդլայնում,
- ջրօգտագործողների միավորումների (ՋՕՄ) կառավարչական կարողությունների զարգացումը և տեխնիկական հագեցվածության բարձրացումը, ՋՕՄ ֆեդերացիաների ստեղծումը:

Վարկային միջոցները հատկացվել են 2.0% տարեկան տոկոսադրույքով, դրանց օգտագործման ժամկետը սահմանվել է մինչև 10 տարի, մարման ժամկետը՝ 2025-ից մինչև 2035 թվականը, ծրագրի իրականացման վերջնաժամկետը՝ 31.12.2023 թվականը, իսկ վարկի հասանելիության ժամկետը՝ մինչև 30.06.2024 թվականը: Վարկային Համաձայնագրով ՀՀ կառավարության համաֆինանսավորումը նախատեսվել է ոչ պակաս 10,000.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով:

50,000.0 հազ. ԱՄՆ դոլարից՝ ներառյալ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը, 01.01.2021 թվականի դրությամբ ծախսվել է 16,109.197 հազ. ԱՄՆ դոլարը (32.2%), իսկ իսկ 01.10.2021 թվականի դրությամբ՝ 22,581.537 հազ. ԱՄՆ դոլար, կամ 2021 թվականի ինն ամիսներին ծախսված գումարը կազմել է 6,472.340 հազ. ԱՄՆ դոլար:

Ծրագրի բաղադրիչներն են՝

- **Բաղադրիչ 1**. Մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսով: Տվյալ բաղադրիչով աշխատանքներն ավարտվել են, և վճարված 135.473 հազ. ԱՄՆ դոլարը, կամ դրան համարժեք 71,003.29 հազ. դրամը շինարարական աշխատանքներ կատարած «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի հետավարտական (01.01.2021-31.03.2021) 5.0% վճարումն է:
- **Բաղադրիչ 2.** «Մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում», որով փաստացի վճարումները կազմել են 1,367.1 հազ. ԱՄՆ դոլար, կամ դրան համարժեք 688,822.36 հազ. դրամ:

Բաղադրիչ 3. «Ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում կամ կառուցում», որի շրջանակում փաստացի վճարումները կազմել են 4,387.648 հազ. ԱՄՆ դոլար, կամ դրան համարժեք 2,229,949.98 հազ. դրամ:

Համաձայն վարկային Համաձայնագրի հավելված 4-ի «Ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում կամ կառուցում» բաղադրիչ 3-ի՝ շինարարական աշխատանքների զուտ արժեքի 10 %-ը իրականացվում է նաև համայնքների համաֆինանսավորման միջոցների հաշվին:

Վերոնշյալ երեք բաղադրիչներով հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքների մասով վճարվել է 5,890,287 հազ. ԱՄՆ դոլար, կամ 2,989,775.72 հազ. դրամ, այդ թվում՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների հաշվին վճարվել է 642,047.7 հազ. դրամ, իսկ համայնքների համաֆինանսավորման միջոցների հաշվին վճարվել է 174,690.7 հազ. դրամ:

31005 միջոցառման «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 4,714,169.90 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 1,004,338.90 հազ. դրամ, փաստացի ծախսը 3,750,050.89 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 2,836,057.14 հազ. դրամ: Փաստացի ծախսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 79.55%:

ԾՐԱԳԻՐ՝ «1004 Ոռոգման համակարգի առողջացում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում»

Զարգացման ֆրանսիական գործակալության (այսուհետ՝ ԶՖԳ, վարկատու) և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2016 թվականի հունվարի 26-ով թվագրվել է ՀՄ. CAM 1002 01 Y վարկային համաձայնագիրը:

Վարկային համաձայնագրի պայմաններին համապատասխան՝ Վարկատուն տրամադրում է 75,000.00 հազ. եվրո առավելագույն ընդհանուր գումարի չափով վարկ:

Ծրագրի առանձնահատուկ խնդիրներն են՝

- Ջրային ռեսուրսների առավել կայուն կառավարումը,
- Առավել արդյունավետ, էժան և ավելի լավ կառավարվող ոռոգման ցանցի ստեղծումը,
- Առավել արդյունավետ գյուղատնտեսությունը և գրավիչ գյուղատնտեսական եկամուտը:

Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.1.1 կետով սահմանվել են ֆիքսված տոկոսադրույք, մասնավորապես՝ յուրաքանչյուր առհանման նկատմամբ կիրառելի տոկոսադրույքը պետք է լինի ստորագրման օրվանից մինչև համապատասխան դրույքի սահմանման օրն ընկած ժամանակահատվածում ինդեքսային դրույքի տատանումից ավելացող կամ նվազող ֆիքսված հաշվարկային դրույքը: Բացի այդ, որոշված տոկոսադրույքը չպետք է գերազանցի տարեկան 6.25%-ը, կամ ավելի ցածր լինի տարեկան 0.25%-ից՝ անկախ տոկոսադրույքի ցանկացած նվազումից:

Ծրագիրը պարունակում է հետևյալ բաղադրիչները՝

Բաղադրիչ 1. Վեդու ջրամբարի և օժանդակ կառուցվածքների շինարարություն, որը ներառում է Վեդու ջրամբարի և օժանդակ կառույցների շինարարությունը: Ջրամբարի համար ընտրված տեղանքը գտնվում է գետի վրա տեղակայված ջրառներից մոտ 10 կմ հեռու՝ տեխնիկական և տնտեսական նկատառումներից ելնելով:

Բաղադրիչ 2. Ոռոգելի մակերեսի վերականգնում, արդիականացում, ընդլայնում

Ծրագրի շրջանակներում ընտրված ցանցի վրա աշխատանքը վերաբերում է 3 220 հա տարածքին, որը գտնվում է նախկին «Վեդի» ՋՕԸ-ի և «Արարատ» ՋՕԸ-ի տարածքներում:

Վերոնշյալ երկու բաղադրիչների (ջրամբար և ոռոգման ցանց) ընդհանուր արժեքը գնահատվել է 90,000.0 հազ. եվրո, այդ թվում՝ ՀՀ կառավարության մասնակցությունը ԱԱՀ-ի մասով կազմում է 15,000.0 հազ. եվրո:

Քանի որ ծրագիրը շարունակական է և շինարարական աշխատանքների բովանդակության մեջ փոփոխություններ չեն կատարվել, վերոնշյալ բաղադրիչների մանրամասն նկարագրությունը արդեն իսկ ներկայացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից Ջրային կոմիտեում իրականացված՝ 2021 թվականի 3 և 6 ամիսների պետական բյուջեի կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ հաստատված ընթացիկ եզրակացություններում:

Կատարվող աշխատանքների արդյունքում ակնկալվում է բարձրացնել ցանցի արդյունավետությունը 50%-ից մինչև 75%-ի չափով (հնարվոր է նույնիսկ 80%-ի չափով, երբ վերանորոգումն ուղեկցվի սարքավորումների տեղադրմամբ):

31001 միջոցառման տարեկան ճշտված պլանով «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով նախատեսվել է 5,071,075.10 հազ.

դրամի ծախս, հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 4,639,404.70 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 892,144.20 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 3,980,640.14 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 2,741,396.33 հազ. դրամ: Փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ կազմել է 85.80%:

Վճարումները կատարվել են ՀՏՋ Հիմնադրամի կողմից ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե ներկայացված թվով 7 հայտ-գրությունների հիման վրա՝ ընդամենը 892,144.4 հազ. դրամի չափով: Ընդ որում, ՀՏՋ Հիմնադրամի կողմից 2021 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում հայտ գրություն չի ներկայացվել, միայն 23.06.2021 թվականի հայտ-գրությամբ ներկայացված 628,345.7 հազ. դրամից 29.06.2021 թվականին կատարվել է փոխանցում 160,000.0 հազ. դրամի և 19.07.2021 թվականին՝ 468,345.7 հազ. դրամի չափով: Ներկայացված հայտ-գրությունների հիման վրա 892,144.4 հազ. դրամի փոխանցումները կատարվել են ՀՀ կառավարության համաֆինանսավորման գումարից:

Համաձայն ՀՏՋ Հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ»-ի կողմից ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին ներկայացված՝ Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին 01.01.2021-30.09.2021 թվականի ժամանակահատվածի վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման վերաբերյալ հաշվետվությունների՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման գծով ըստ օրինակելի ձև Հ-2 հաշվետվության՝ տարեկան ճշտված պլանով 511200 հոդվածով ծախսը նախատեսվել է 1,107,979.4 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 892,144.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 663,328.9 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 596,982.67 հազ. դրամ:

Ըստ հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին (վարկային միջոցների մասով) ձև Հ-2 հաշվետվության՝ տարեկան ճշտված նախահաշվով 5112 հոդվածով ծախսը նախատեսվել է 3,963,095.7 հազ. դրամի չափով, փաստացի ծախսը կազմել է 3,317,311.24 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 2,144,413.66 հազ. դրամ:

Ըստ հիմնարկի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների վերաբերյալ հաշվետվության ձև Հ-4-ի՝ 01.01.2021 թվականի դրությամբ տարեսկզբի կրեդիտորական պարտքը բյուջեից կազմել է 343,021.13 հազ. դրամ, 30.09.2021 թվականի դրությամբ՝ 409,367.36 հազ. դրամ:

2021 թվականի ինն ամիսների հաշվետվությունը ձևավորելիս, ինչպես նախորդ ժամանակահատվածներում, հիմք է ընդունվել ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/73/19739-2020 գրությամբ սահմանված փոխարժեքների մակարդակը:

Ծրագրի շրջանակում 2021 թվականի 1-ին կիսամյակում ՀՀ ֆինանսների նախարարության «Client-Treasury» համակարգով «Սահակյանշին» ՓԲԸ (ՀՀ) –

«ՊԵԳԱ Քընսսթրակշն» ԲԸ (Իրան) ՀՁ–ին փոխանցվել է ընդամենը 2,234.147 հազ. եվրո, կամ դրան համարժեք 1,368,391.97 հազ. դրամ:

Ծրագրի շրջանակում 2021 թվականի ինն ամիսներին ՀՀ ֆինանսների նախարարության «Client-Treasury» համակարգի տվյալներով «Սահակայանշին» ՓԲԸ (ՀՀ)–«ՊԵԳԱ Քընսսթրակշն» ԲԸ (Իրան) ՀՁ–ին՝ ըստ կատարողական ակտերի, 01.01.2021-30.09.2021 թվականի ընթացքում փոխանցվել է ընդամենը 4,523.66 հազ. եվրո, որը փոխարկելուց հետո կազմել է 2,720,101.44 հազ. դրամ:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվության՝ դրամարկղային ծախսը կազմել է 2,741,396.33 հազ. դրամ, իսկ վճարումը «Սահակյանշին» ՓԲԸ-ին՝ 2,720,101.44 հազ. դրամ:

Ինչպես 2020 թվականի, այնպես էլ 2021 թվականի վեց ամիսների արդյունքներով ներկայացված ընթացիկ եզրակացություններում արձանագրվել է, որ հաշվեքննության շրջանակում ընդգրկված 1004-31005 և 1004-31001 միջոցառումների մասով կատարված աշխատանքների դիմաց վճարումների հիմքում ընկած կատարողական ակտերը և կատարված ծախսերը հիմնավորող այլ սկզբնական փաստաթղթերը ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չեն տրամադրվել՝ պատճառաբանելով որ դրանք գտնվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամում: Նույն հիմնավորմամբ չեն տրամադրվել նաև 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի կատարմանն առնչվող վերոնշյալ փաստաթղթերը:

ԾՐԱԳԻՐ «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագիր

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառում

«11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 2021 թվականի տարեկան պլանը հաստատվել է 2,856,008.0 հազ. դրամ, նույնքան կազմել է նաև ինն ամսվա ճշտված պլանը: Հաշվետու ժամանակահատվածի՝ 2021 թվականի ինն ամիսների, ֆինանսավորումը, փաստացի ծախսը և փաստը (դրամարկղային ծախս) կազմել են 2,842,212.08 հազարական դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ կազմել է 99.5%, մնացորդը 01.10.2021 թվականի դրությամբ կազմել է 13,795.92 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշմամբ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական

աջակցության տրամադրում» միջոցառմանը նախատեսվել է պետական բյուջեից հատկացնել 2,856,008.0 հազ. դրամ՝ ոռոգման ոլորտի սուբսիդավորում ջրօգտագործողների ընկերությունների (այսուհետ՝ ՋՕԸ) համար սահմանված ոռոգման ջրի սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26.02.2021 թվականի թիվ 253-Ա հրամանով հաստատվել են 2021 թվականի ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակներն՝ ըստ առանձին ՋՕԸ-երի, իսկ 31.08.2021 թվականի թիվ 1508-Ա հրամանով չափաքանակներն ըստ ՋՕԸ-երի փոփոխվել են՝ ընդամենը 2,856,008.0 հազ. դրամ գումարի սահմանում: Չափաքանակների փոփոխման համար հիմք է ընդունվել ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի նախագահի գրությունը՝ համաձայն որի թվով 5 ՋՕԸ-երն ունեն էլէկտրաէներգիայի գծով 387,036.11 հազ. դրամի պարտավորություն, սակայն հաստատված չափաքանակների գումարները սպառվել են և անհրաժեշտ է կատարել վերաբաշխում ՋՕԸ-երի հաստատված չափաքանակների միջև: Արդյունքում, թվով 9 ՋՕԸ-երի սահմանված չափաքանակները պակասեցվել են 390,836.11 հազ. դրամով, որն ուղղվել է 5 ՋՕԸ-երին:

01.10.2021 թվականի դրությամբ՝ ըստ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմտեի կողմից ներկայացված եռամսյակային հաշվետվությունների, 15 ՋՕԸ-երին 11002 միջոցառման մասով վճարվել է 2,842,212.08 հազ. դրամի չափով սուբսիդիայի գումար, իսկ ծախսը նրանց ներկայացրած հաշվետվություններով կազմել է 2,829,980.57 հազ. դրամ: «Շենիկ» ՋՕԸ-ի տեղեկանք-հաշվետվության համաձայն՝ ջրառի գծով 12,231.48 հազ. դրամը պարտքի մարման համար գումարը վճարվել է հոկտեմբեր ամսին:

11002 միջոցառման գծով 2,842,212.08 հազ. դրամ դրամարկղային ծախսը կատարվել է հետևյալ ուղղություններով՝ 1,657,012.19 հազ. դրամն ուղղվել է էլեկտրաէներգիայի գծով առաջացած պարտքերի մարմանը, 658,917.97 հազ. դրամը՝ գարնան նախապատրաստական աշխատանքներին, 381,701.60 հազ. դրամն՝ աշխատավարձի պարտքի և 144,580.31 հազ. դրամը՝ հարկային պարտավորությունների մարմանը:

ՋՕԸ-երի մոտ 2021 թվականի ինն ամիսների ընթացքում առաջացած կրեդիտորական պարտավորությունների մարման համար՝ նրանց կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա սուբսիդիայի գումարների տրամադրման համար՝ այդ նպատակով ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի նախագահի 18.03.2021 թվականի թիվ 63-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կազմվել են թվով 15 արձանագրություններ: Արձանագրություններում, ինչպես նաև դրանց հիման վրա ՋՕԸ-երի հետ կնքված՝ թվով 153 պայմանագրերում նշվել են առաջացած պարտավորությունների մարման առաջնահերթ ուղղությունները:

«11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակում գարնան նախապատրաստական աշխատանքների իրականացման նպատակով ՋՕԸ-երին նախատեսվել է հատկացնել 2,856,008.00 հազ. դրամ, հատկացվել է 658,917.97 հազ. դրամ, կամ նախատեսվածի 23.1%-ը: ՋՕԸ-երի կողմից ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե ներկայացվել են ստացած սուբսիդիայի գումարների ծախսման ուղղությունների վերաբերյալ հաշվետվություններ, որոնցում նշվել են կատարված ծախսերի չափաբաժիններն ըստ անվանումների:

ԾՐԱԳԻՐ՝ «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագիր
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը»

«12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 2021 թվականի պետական բյուջեի պլանը հաստատվել է 1,795,808.6 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 4,531,557.90 հազ. դրամ, նույնքան կազմել է հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը: Հաշվետու ժամանակահատվածի ֆինանսավորումը, փաստացի ծախսը, փաստը (դրամարկղային ծախս) կազմել են 3,867,775.04 հազարական դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ կազմել է 85.35%, մնացորդը 01.10.2021 թվականի դրությամբ՝ 663,782.86 հազ. դրամ:

Տվյալ միջոցառման գումարներից ՋՕԸ-երի սուբսիդավորման համար ՀՀ կառավարության 13.05.2021 թվականի թիվ 785-Լ որոշմամբ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին նախատեսվել է հատկացնել 1,795,808.5 հազ. դրամ, իսկ ՀՀ կառավարության 24.09.2021 թվականի թիվ 1559-Ն որոշմամբ՝ ևս 2,735,749.3 հազ. դրամ:

12001 միջոցառման գծով 3,867,775.036 հազ. դրամ դրամարկղային ծախսը հաշվետու ժամանակահատվածում կատարվել է հետևյալ ուղղություններով՝ 2,965,872.34 հազ. դրամն ուղղվել է էլեկտրաէներգիայի գծով առաջացած պարտքերի մարմանը, 774,890.70 հազ. դրամը՝ «Ջրառ» ՓԲԸ-ից գնված ջրի դիմաց, 90,968.82 հազ. դրամն՝ աշխատավարձի պարտքի և 36,043.18 հազ. դրամը՝ հարկային պարտավորությունների մարմանը:

ՋՕԸ-երի մոտ 2021 թվականի ինը ամսվա ընթացքում առաջացած կրեդիտորական պարտավորությունների մարման համար ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա սուբսիդիայի գումարների տրամադրման համար՝ այդ նպատակով ՀՀ ՏԿԵՆ

Ջրային կոմիտեի նախագահի 18.03.2021 թվականի թիվ 63-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից, կազմվել են թվով 6 արձանագրություններ: Արձանագրություններում, ինչպես նաև դրանց հիման վրա ՋՕԸ-երի հետ կնքված՝ թվով 74 պայմանագրերում նշվել են առաջացած պարտավորությունների մարման առաջնահերթ ուղղությունները:

IV ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի 8-րդ կետի «ե» ենթակետի պահանջի հետ, որով նախատեսվել է սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագրում ներառել արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքի, կատարվող աշխատանքի ու մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գինը, պայմանագրի շրջանակներում արտադրման, ներմուծման կամ արտահանման ենթակա ապրանքների, կատարման ենթակա աշխատանքների ու մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակի և դրա փոփոխման պայմանների վերաբերյալ դրույթները:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և ՋՕԸ-երի միջև կնքված՝ ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրերում պահանջվող դրույթները չեն ներառվել:

2. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 17.10.2002 թվականի «ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհուրդ ստեղծելու, խորհրդի կանոնադրությունը հաստատելու և գործադիր մարմնի մասին» թիվ 1678-Ն որոշման 2-րդ հավելվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջի հետ՝ ըստ որի ՋՕԸ-երի գործունեությունը համակարգող կանոնակարգող խորհուրդը, որի գործադիր մարմինն է հանդիսանում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն, չի ապահովել իրեն վերապահված գործառույթը՝ կապված ՋՕԸ-երին տրամադրվող ֆինանսական աջակցության չափաքանակների ու դրանց օգտագործման արդյունավետության քննարկման հետ:

3. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 20-ի թիվ 1144-Լ որոշմամբ հաստատված՝ Ոռոգման համակարգի ֆինանսական առողջացման աջակցության ծրագրի Հավելված 3-ի Ճանապարհային քարտեզի 1-ին կետի պահանջի հետ՝ համաձայն որի Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 10 մլն եվրո գումարի չափով ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում որպես ծրագրի բաղադրիչներ նախատեսվում է իրականացնել ջրային համակարգի նոր ռազմավարության մշակում և 2021 թվականի 4-րդ եռամսյակում ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում: Սակայն այդ աշխատանքները իրականացնողի ընտրության մրցույթը դեռ չի կայացել:

4. Առկա է անհամապատասխանություն նաև ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 20-ի թիվ 1144-Լ որոշմամբ հաստատված՝ Ոռոգման համակարգի ֆինանսական առողջացման աջակցության ծրագրի Հավելված 3-ի Ճանապարհային քարտեզի 6-րդ կետի պահանջի հետ՝ ըստ որի 2021 թվականի 2-րդ կիսամյակում ՋՕԸ-երի հաշվապահական հաշվառման վարումը պետք է հանձնվեր պատվիրակված մասնագիտացված կազմակերության, մինչդեռ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից այդ աշխատանքի կատարումը չի ապահովվել:

V ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 12001 միջոցառման գծով 3,867,775.036 հազ. դրամ ֆինանսավորումն ու ծախսը կատարվել է ամբողջությամբ, մինչդեռ հաշվեքննությամբ պարզվել է, որ «Տավուշ» ՋՕԸ-ին սուբսիդիայի պայմանագրով տրամադրվել է 35,327.3 հազ. դրամ, որից 26,351.348 հազ. դրամը՝ հունիս, հուլիս, օգոստոս ամիսների աշխատավարձի, 8,975.952 հազ. դրամը՝ հարկային պարտավորությունների մասով առաջացած պարտքերի մարման համար: Սակայն «Տավուշ» ՋՕԸ-ի կողմից ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե ներկայացված տեղեկանք-հաշվետվության համաձայն՝ փոխանցված գումարը ընկերության բանկային հաշվին մուտքագրվել է 30.09.2021 թվականին, որի պատճառով հատկացված գումարը վճարվել է հոկտեմբեր անսին: Նույն կերպ՝ «Լոռի» ՋՕԸ-ի տեղեկանք-հաշվետվության համաձայն՝ հուլիս և օգոստոս

ամիսների աշխատավարձի պարտավորությունները մարելու նատակով հատկացված 11,936.92 հազ. դրամ գումարից սեպտեմբեր ամսին վճարվել է 3,324.22 հազ. դրամ, իսկ 8,612.7 հազ. դրամը՝ հոկտեմբեր ամսին:

2. ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշման համաձայն՝ «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման մասով սահմանվել են միջոցառման արդյունքի չափորոշիչները, իսկ «12001 Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը» միջոցառման մասով, որի նկարագրությունն է՝ աջակցություն ոռոգման համակարգի ընկերությունների ֆինանսական կենսունակության բարելավման նպատակով իրականացվող միջոցառումներին, այդպիսի չափորոշիչներ չեն սահմանվել, այն դեպքում, երբ երկու միջոցառումներն էլ ուղղված են ՋՕԸ-երի ֆինանսական կայունությանը և սակագնային ճեղքվածքի մարմանը, այլ կերպ՝ հասցեական ու ծախսային միևնույն բնույթի ֆինանսական աջակցությունը տրոհվել է երկու բյուջետային միջոցառումների միջև:

2021 թվականի պետական բյուջեով ՋՕԸ-երի ընդհանուր պետական ֆինանսական աջակցության համար նախատեսված գումարը կազմում է 7,387,565.00 հազ. դրամ: Ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության տարեկան ճշտված պլանի համաձայն՝ 82.5 հազ. հա ոռոգելու համար 547.74 մլն խմ ջրամատակարարման ծավալի և ընդհանուր 12,782,300.0 հազ. դրամ ծախսերի դեքում՝ մեկ խմ մատակարարված ջրի դիմաց 23.3 դրամ նախատեսված ծախսի դիմաց սուբսիդիայի պահանջվող չափը կկազմի 12.3 դրամ/խմ: ՋՕԸ-երի կողմից ներկայացված (հաստատված) ֆինանսական հոսքերի ցուցանիշները տարբերվում են այդ տվյալներից՝ 90.1 հազ. հա ոռոգելու համար 605,9 մլն խմ ջրամատակարարման ծավալի դիմաց նախատեսվել է 11,725,392.9 հազ. դրամ տարեկան ծախսեր, կամ 19.35 դրամ մեկ խմ-ի դիմաց, իսկ սեփական եկամուտները նախատեսվել են 5,482,630.3 հազ. դրամ, որի դեպքում ֆինանսական ճեղքվածքը կկազմի 6,242,762.6 հազ. դրամ, կամ մեկ խմ-ի դիմաց՝ 10.30 դրամ: Այս պարագայում ՋՕԸ-երի 2021 թվականի պետական ֆինանսական աջակցության գումարը 1,144,803.2 հազ. դրամով գերազանցում է ՋՕԸ-երի բյուջեներով նախատեսված ճեղքվածքը:

3. 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ՋՕԸ-երի կողմից 9,286,000.0 հազ. դրամի չափով ծախսերի ճշտված պլանի փոխարեն փաստը կազմել է 11,142,300.0 հազ. դրամ՝ 1,856,300.0 հազ. դրամով

գերազանցելով նախատեսված ծախսը, իսկ որպես պատճառ նշվել է՝ «Կախված եղանակային պայմաններից, չոր առանց տեղումների, երաշտի պայմաններում մեխանիկական պոմպերի միջոցով լրացուցիչ ջրարտադրությամբ պայմանավորված ավելացել է էլեկտրաէներգիայի փաստացի ծախսը»: Սակայն հաշվեքննությամբ պարզվել է, որ 15 ՋՕԸ-երի ֆինանսական հոսքերի գծով 2021 թվականին նախատեսվել է տեղական աղբյուրներից մեխանիկական ջրարտադրության նպատակով ծախսել ընդհամենը 122,589.5 հազ. կվտժ էլեկտրաէներգիա, ինչպես նաև «Ջրառ» ՓԲԸ-ից գնել մեխանիկական եղանակով մղվող՝ 90,765.0 հազ. խմ և ինքնահոս եղանակով՝ 768,591.0 հազ. խմ ջուր (որոնք ներառված են 11,725,392.9 հազ. դրամ տարեկան ծախսերում): Նախատեսվածի փոխարեն ՋՕԸ-երի 2021 թվականի ինն ամիսների հաշվետվությունների համաձայն՝ փաստացի ծախսը կազմել է տեղական աղբյուրներից մեխանիկական ջրարտադրության մասով՝ 125,120.4 հազ. կվտժ կամ տարվա համար նախատեսվածից ընդամենը 2,530.9 հազ. կվտժ-ով ավելի (2.0%), որի դրամական ծախսը (սակագնի միջինացված հաշվարկով) կազմել է շուրջ 108,684.2 հազ. դրամ, սակայն միայն էլեկտրաէներգիայի մասով ինն ամիսների հավելյալ դրամական ծախսը՝ կանխատեսումների տվյալների համեմատ, կազմել է 1,019,507.9 հազ. դրամ: Այս մասով ՋՕԸ-երի հաշվետվությունների տվյալները տարբերվում են ՀԷՑ ՓԲԸ-ի տվյալից՝ որի համաձայն ինն ամիսների ընթացքում ՋՕԸ-երը ծախսել են 125,371.7 հազ. կվտժ, որի արժեքը կազմում է 5,285,327.8 հազ. դրամ, կամ 87,704.7 հազ. դրամով ՋՕԸ-երի տվյալներից ավել գումար, և այս դեպքում հավելյալ դրամական ծախսը էլեկտրաէներգիայի մասով կազմում է 931,803.2 հազ. դրամ, որի արժանահավատությունը հաստատվել է նաև ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից: Տվյալների ուսումնասիրությամբ պարզվել է, որ էլեկտրաէներգիայի մասով հավելյալ գումարային ծախսը հիմնականում պայմանավորված է ՋՕԸ-երի ֆինանսական հոսքերում նախատեսված և փաստացի սակագնի մեծության միջև տարբերություններով, որոնց ընդհանուր գումարը կազմում է 347,423.8 հազ. դրամ: Այս պարագայում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից էլեկտրաէներգիայի մասով ինն ամիսների կանխատեսվող ծախսը 475,695.2 հազ. դրամով պակաս է հաշվարկվել:

4. 11002 և 12001 միջոցառումների շրջանակում ՋՕԸ-երին սուբսիդիայի տրամադրման պայմանագրերում մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գնի բացակայությունը անորոշության պայմաններ է ստեղծում ՋՕԸ-երին տրամադրվող ֆինանսական աջակցության չափաքանակների հիմնավորման և սահմանման, դրանց օգտագործման արդյունավետության գնահատման գործում: ՋՕԸ-երին ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրերի 2.3. կետում որպես պայման նշված է, որ Ընկերությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է 2021 թվականի եկամուտների և ծախսերի

շրջանակներում նախատեսված կանխատեսումային ցուցանիշներով: ՋՕԸ-երի հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տվել, որ վերջիններս չեն կատարում այդ պայմանն ինչպես սեփական եկամուտների, այնպես էլ ծախսային մասով: 2021 թվականի ինն ամիսների տվյալների համաձայն՝ ՋՕԸ-երի կողմից ջրօգտագործողներին մատակարարված 528,109.9 հազ. խմ ջրի դիմաց հասույթը կազմել է 5,809,208.6 հազ. դրամ, իսկ փաստացի գանձումները (ներառյալ անդամավճարները)՝ ընդամենը 2,837,285.8 հազ. դրամ, կամ նախատեսվածի 48,8%-ի չափով: Ընդամենը հաշվետու ժամանակահատվածում ՋՕԸ-երը չեն հավաքագրել 2,971,922.8 հազ. դրամ, իսկ պետական ֆինանսական աջակցությունը կազմել է 6,709,987.1 հազ. դրամ, որից 2,735,749.3 հազ. դրամը հատկացվել է ՀՀ կառավարության 24.09.2021 թվականի թիվ 1559-Ն որոշմամբ: Արդյունքում, ՋՕԸ-երի գործունեության ցածր արդյունավետությունը հանգեցրել է նախատեսված եկամուտները չապահովելու հետևանքով առաջացած ճեղքվածքի փակման համար պետական բյուջեից հավելյալ միջոցների ներգրավմանը: ՋՕԸ-երի պետական ֆինանսական աջակցության արդյունավետության գնահատման բացակայության մասին է վկայում նաև այն, որ 2021 թվականի պետական ֆինանսական աջակցությունը նրանց բյուջեներով նախատեսված ֆինանսական ճեղքվածքը 1,114,803.2 հազ. դրամով գերազանցվելու պայմաններում, ինն ամիսների արդյունքներով ՋՕԸ-երի կրեդիտորական պարտքերն ավելացել են 1,753,381.9 հազ. դրամով՝ 01.10.2021 թվականի դրությամբ կազմելով 3,629,720.3 հազ. դրամ, իսկ դեբիտորական պարտքերը կազմել են 26,591,223.8 հազ. դրամ:

5. ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի թիվ 33 արձանագրային որոշմամբ ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման Ռազմավարության 12-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ ՋՕԸ-երին ընթացիկ դրամաշնորհները տրամադրվելու են վերջիններիս կողմից որոշակի պայմաններին բավարարելու պարագայում, իսկ 12-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվել են դրամաշնորհների տրամադրման հիմնական պայմանները, մասնավորապես՝ սկսած 2019 թվականից, ՋՕԸ-երի կրեդիտորական պարտավորությունները չեն կարող գերազանցել տվյալ տարվա հաշվեգրված ծախսերի 8.0%-ի առավելագույն սահմանը, որը կարող է փոփոխվել գործողությունների ծրագրով նախատեսված բյուջեների կազմման մեթոդաբանությամբ հաստատված բյուջեների համաձայն: Հաշվեքննությամբ պարզվել է, որ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և ՋՕԸ-երի միջև 2021 թվականին կնքած սուբսիդիայի տրամադրման պայմանագրերում չեն սահմանվել Ռազմավարությամբ ամրագրված վերը նշված պայմանները, նախապայմանները և մեխանիզմները:

6. ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 20-ի թիվ 1144-Լ որոշմամբ հաստատվել է Ոռոգման համակարգի ֆինանսական առողջացման

աջակցության ծրագիրը, որի հիմնական ուղղվածություններից է ոռոգման համակարգի շահագործման ծախսերի կրճատումը, մինչդեռ 2020 թվականին ՋՕԸ-րի տարեկան 11,136,941.3 հազ. դրամ ծախսերի պարագայում 2021 թվականի ինն ամիսների փաստացի ծախսերը արդեն իսկ գերազանցվել են՝ կազմելով 11,170,145.2 հազ. դրամ:

7. Հաշվեքննությամբ անհամապատասխանություններ են արձանագրվել ՋՕԸ-երի կողմից ներկայացված հաշվետվությունների և ջրի կառավարման GIS էլեկտրոնային համակարգում տեղադրված տվյալների միջև: Այսպես՝ ՋՕԸ-երի կողմից տեղական աղբյուրներից մեխանիկական ջրարտադրության նպատակով ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսը հաշվետվությունների համաձայն կազմել է 125,120.4 հազ. կվտժ (ճշտված՝ 125,371.7 հազ. կվտժ), իսկ GIS համակարգի տվյալներով մեխանիկական եղանակով ջուր մղելու համար ծախսվել է 109,080.3 հազ. կվտժ, կամ տարբերությունը կազմել է 16,040.1 հազ. կվտժ: Անհամապատասխանություններ կան նաև ոռոգելի հողերի, ջրի ծավալների, հասույթի ու գանձումների տվյալների մասով:

8. Հաշվեքննության շրջանակում սուբսիդիայի գումարների հաշվին կատարված աշխատանքները և ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրությամբ ընտրանքային կարգով ընդգրկվել են «Արմավիր», «Արտաշատ և «Արարատ» ՋՕԸ-երի կողմից ներկայացված փաստաթղթերը, որի արդյունքում՝ ըստ ՋՕԸ-երի արձանագրվել է հետևյալը՝

- «Արմավիր» ՋՕԸ-ի մասով բացակայում են ջրանցքների, պոմպակայանների նորոգման, կարգաբերման և շահագործման ակտերը, ավտոպահեստամասերի և մեքենա-մեխանիզմների վերանորոգման, մասերի ձեռք բերման փաստաթղթերը, ինչպես նաև շահագործման ակտերը,
- «Արարատ» ՋՕԸ-ի մասով բացակայում են պայմանագրերով ամրագրված աշխատանքների ավարտման ամսաթվերը, կատարված աշխատանքների նկարագիրը և ընդհանուր պայմանագրային գինը, համապատասխան հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների ավարտի փաստագրումը, պոմպակայանների կամ խորքային հորերի պոմպերի կարգաբերման և շահագործման ակտերը, ավտոպահեստամասերի և մեքենա-մեխանիզմների վերանորոգման, մասերի ձեռք բերման փաստաթղթերն, ինչպես նաև շահագործման ակտերը:
- «Արտաշատ» ՋՕԸ-ի մասով բացակայում են վարձակալված մեխանիզմների ընդունման և հանձնման ակտերը, համապատասխան հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների ավարտի փաստագրումը, պայմանագրերով ամրագրված՝ տեխնիկական շահագործման ծառայությունների մատուցման կանխավճարի և ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու համար նախատեսված տուգանքի չափերը, կատարված աշխատանքների ավարտական

ակտերը և պոմպակայանների կամ խորքային հորերի պոմպերի կարգաբերման և շահագործման ակտերը:

VI ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն բավարար միջոցներ չի ձեռնարկել 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեով հաստատված միջոցառումների և դրանց շրջանակներում նախատեսված ծավալով աշխատանքների կատարման ուղղությամբ:

2. Չի ապահովվել ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման պահանջի կատարումը՝ կապված պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի 8-րդ կետի «ե» ենթակետի պահանջին համապատասխան ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և ՋՕԸ-երի միջև կնքված՝ արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գինը, պայմանագրի շրջանակներում արտադրման, ներմուծման կամ արտահանման ենթակա ապրանքների, կատարման ենթակա աշխատանքների, մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակի և դրա փոփոխման պայմանների վերաբերյալ դրույթները պայմանագրերում ներառելու հետ:

3. Չի պահպանվել ՀՀ կառավարության «ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհուրդ ստեղծելու, խորհրդի կանոնադրությունը հաստատելու և գործադիր մարմնի մասին» թիվ 1678-Ն

որոշման 2-րդ հավելվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը՝ ՋՕԸ-երի գործունեությունը համակարգող կանոնակարգող խորհրդի կողմից իրեն վերապահված՝ ՋՕԸ-երին տրամադրվող ֆինանսական աջակցության չափաքանակների ու դրանց օգտագործման արդյունավետության քննարկման հետ կապված գործառույթների կատարումն ապահովելու համար:

5. Միջոցներ չեն ձեռնարկվել ջրային համակարգի նոր ռազմավարություն մշակելու և 2021 թվականի 4-րդ եռամսյակում ՀՀ կառավարության որոշման նախագիծ ներկայացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 20-ի թիվ 1144-Լ որոշման պահանջը սահմանված ժամկետում կատարելու ուղղությամբ:

6. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության արդյունավետության բարձրացման նպատակով չեն մշակել վերջնական արդյունքի գնահատմանն անհրաժեշտ ֆինանսական կայունության չափանիշներ, ինչպես նաև չեն ընդունվել ֆինանսական աջակցության գումարների բաշխման մեթոդաբանություն և մեխանիզմներ:

7. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից իրատեսական հաշվարկներ և հիմնավորումներ չեն կատարվել ՋՕԸ-երի 2021 թվականի պետական ֆինանսական աջակցության հիմքում դրված ծախսերի կանխատեսումներում, որի արդյունքում էլեկտրաէներգիայի մասով ինն ամիսների կանխատեսվող ցուցանիշը 475,695.2 հազ. դրամով պակաս է հաշվարկվել: Պատշաճ հսկողություն չի իրականացվել ՋՕԸ-երի կողմից ներկայացված հաշվետվություններում արտացոլված տվյալների նկատմամբ, 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվությունում նախատեսվածից ավելի կատարված ծասերի պատճառաբանությունը հիմնավոր չէ:

8. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն հետևողականություն չի ցուցաբերել ՋՕԸ-երի կողմից եկամուտների և ծախսերի շրջանակներում նախատեսված կանխատեսումային ցուցանիշների կատարման, առաջացած շեղումների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ավելացման պատճառների բացահայտման և վերացման, ֆինանսական աջակցության արդյունավետության գնահատման գործում մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գնի սահմանման, նրանց ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների բարելավման, բյուջեներով նախատեսված ֆինանսական ճեղքվածքի նվազեցման գործում:

9. Չի ապահովվել ոռոգման ոլորտի Ֆինանսական կայունության բարելավման ռազմավարության 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետով սահմանված պայմանների կատարումը՝ սկսած 2019 թվականից ՋՕԸ-երի կրեդիտորական պարտավորությունները 8.0%-ի առավելագույն սահմանը գերազանցելու դեպքում

ոռոգման համակարգի պետության կողմից սուբսիդավորումը դադարեցնելու վերաբերյալ: ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և ՋՕԸ-երի միջև 2021 թվականին կնքած սուբսիդիայի տրամադրման պայմանագրերում չեն սահմանվել Ռազմավարությամբ ամրագրված վերը նշված պայմանները, նախապայմանները և մեխանիզմները:

10. ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 20-ի թիվ 1144-Լ որոշմամբ հաստատվել է Ոռոգման համակարգի ֆինանսական առողջացման աջակցության ծրագիրը, որի հիմնական ուղղվածություններից է ոռոգման համակարգի շահագործման ծախսերի կրճատումը, մինչդեռ ՋՕԸ-երի 2020 թվականի տարեկան 11,136,941.3 հազ. դրամ ծախսերի պարագայում 2021 թվականի ինն ամիսների փաստացի ծախսերը արդեն իսկ գերազանցվել են՝ կազմելով 11,170,145.2 հազ. դրամ:

11.ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն չի ապահովել ջրի կառավարման GIS էլեկտրոնային համակարգի աշխատանքի արժանահավատությունը, որի արդյունքում անհամապատասխանություններ են արձանագրվել ՋՕԸ-երի կողմից ներկայացված հաշվետվությունների և GIS համակարգում տեղադրված՝ էլեկտրաէներգիայի, ոռոգելի հողերի, ջրի ծավալների, հասույթի ու գանձումների տվյալների միջև:

12. ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեն չունի ՀՏԶ Հիմնադրամի կողմից ներկայացված հայտ-գրությունների հիման վրա փոխանցվող գումարների հիմնավորվածությունը հավաստող փաստաթղթերի ճշտության նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ:

13. ՋՕԸ-երի կողմից սուբսիդիայի գումարների հաշվին գարնան նախապատրաստական աշխատանքների շրջանակում կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը թերի են:

VII ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին

1. Վերլուծել 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և իրականացվող միջոցառումների կատարման ընթացքը՝ հատուկ ուշադրություն դարձնելով գարնան նախապատրաստական աշխատանքների գծով կատարված ծախսերի ցածր մակարդակին: Մշակել կոնկրետ միջոցառումներ արձանագրված թերակատարումները վերացնելու ուղղությամբ:
2. Ոռոգման համակարգին տրամադրվող պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու ու գնահատումը ավելի թափանցիկ դարձնելու նպատակով ՋՕԸ-երին հատկացվող պետական ֆինանսական աջակցությունը միավորել բյուջետային մեկ միջոցառման շրջանակում:
3. Ապահովել ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման պահանջի կատարումը, ՋՕԸ-երի հետ կնքվող սուբսիդիաների տրամադրման պայմանագրերում պարատադիր ներառել դրույթներ՝ կապված արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գնի, պայմանագրի շրջանակներում արտադրման, ներմուծման կամ արտահանման ենթակա ապրանքների, կատարման ենթակա աշխատանքների, մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակի և դրա փոփոխման պայմանների հետ:
4. Միջոցներ ձեռնարկել ՀՀ կառավարության «ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհուրդ ստեղծելու, խորհրդի կանոնադրությունը հաստատելու և գործադիր մարմնի մասին» թիվ 1678-Ն որոշման պահանջներին համապատասխան ՋՕԸ-երի գործունեությունը համակարգող կանոնակարգող խորհրդի դերը ՋՕԸ-երին տրամադրվող ֆինանսական աջակցության չափաքանակների ու դրանց օգտագործման արդյունավետության քննարկման գործում ապահովելու ուղղությամբ:
5. Ակտիվացնել աշխատանքները ջրային համակարգի նոր ռազմավարություն մշակելու և ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 20-ի թիվ 1144-Լ որոշմանը համաձայն նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելու ուղղությամբ:
6. Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրման միջոցառման շրջանակում ՋՕԸ-ների հետ պայմանագրերում ներառել Ռազմավարությամբ սահմանված պայմանները,

նախապայմանները և գործուն մեխանիզմները, մշակել և ընդունել ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության չափաքանակների մեծության սահմանման և փոփոխման մեթոդաբանություն:

7. Ուժեղացնել հսկողությունը պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով ցուցանիշների կանխատեսման ու պլանավորման, ինչպես նաև ՋՕԸ-երի կողմից ներկայացված արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություններում արտացոլված տվյալների ճշտության նկատմամբ:

8. ՋՕԸ-երի հետ քննարկել եկամուտների և ծախսերի գծով նախատեսված կանխատեսումային ցուցանիշների չկատարման, առաջացած շեղումների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ավելացման պատճառների, դրանց վերացման ուղիների, ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների բարելավման, բյուջեներով նախատեսված ֆինանսական ճեղքվածքի նվազեցման վերաբերյալ սույն ընթացիկ եզրակացությունում արձանագրված փաստերը, մշակել դրանց վերացմանն ուղղված միջոցառումներ:

9. ՋՕԸ-երի հետ քննարկել առաջացած կրեդիտորական պարտքերի նվազեցման և վերակառուցման խնդիրն, այդ նպատակով՝ ելնելով Ռազմավարության հիմնադրույթներից, մշակել և ընդունել համապատասխան գործողությունների ծրագիր:

10. Ձեռնարկել միջոցներ ՋՕԸ-երի դեբիտորական պարտքերի նվազեցման ուղղությամբ:

11. Վերլուծել ՋՕԸ-երի կողմից ներկայացված հաշվետվություններում ու ջրի կառավարման GIS էլեկտրոնային ծրագրում արտացոլված տվյալների միջև առկա անհամապատասխանությունների պատճառները, քայլեր ձեռնարկել դրանք բացառելու նպատակով:

12. Խստացնել պահանջը ՋՕԸ-երի նկատմամբ՝ սուբսիդիայի գումարների հաշվին գարնան նախապատրաստական աշխատանքների շրջանակում կատարված աշխատանքները և ծախսերը հիմնավորող փաստաթղթերի առկայությունն ապահովելու գործում:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի

վերաբերյալ դիտողություններ և առարկություններ չեն ներկայացվել, ներկայացվել է տեղեկատվություն, որում պարունակվում են բացատրություններ (կցվում են):

ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

WATER COMMITTEE
CHAIRPERSON

ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 909, ֆաքս՝ (374 10) 540 613
Էլ.փոստ scws@scws.am

13a, Vardanants st., Yerevan0010, Armenia
Tel.: (374 10) 540 909, fax: (374 10) 540 613
E-mail:scws@scws.am

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն Լ. ՅՈԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլյան

Ի պատասխան Ձեր 29.12.2021թ. N ՀՊԵ-701 գրության ՀՀ Հաշվեքննիչ պալատի 13.10.2021թ. N 256-Ա որոշմամբ հաստատված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության արձանագրության վերաբերյալ ներկայացնում եմ Ջրային կոմիտեի գրավոր տեղեկատվությունը.

1. Արձանագրության <<Վարկային ծրագրերի և դրանց շրջանակներում իրականացված միջոցառումների վերաբերյալ>> մասի 1004 ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման նկարագրության վերջին նախադասությունը՝ <<Վերոնշյալ երեք բաղադրիչներով հաշվետու ժամանակաշրջանում հայտերի հիման վրա շինարարական աշխատանքների մասով վճարվել է 5,890,287 հազ. ԱՄՆ դոլար, կամ 2,989,775.72 հազ. դրամ, այդ թվում՝ համաֆինանսավորումը կազմել է 1,031,820.0 հազ. դրամ:>> փոխարինել <<Վերոնշյալ երեք բաղադրիչներով հաշվետու ժամանակաշրջանում շինարարական աշխատանքների մասով վճարվել է 5,890,287 հազ. ԱՄՆ դոլար, կամ 2,989,775.72 հազ. դրամ, այդ թվում՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների հաշվին վճարվել է 642,047.7 հազ. դրամ, իսկ համայնքների համաֆինանսավորման միջոցների հաշվին վճարվել է 174,690.7 հազ. դրամ:>> նախադասությամբ:

2. Արձանագրության 16-րդ էջում նշված <<Տավուշ>> և <<Լոռի>> ՋՕԸ-երի կողմից հոկտեմբեր ամսին կատարված վճարումների վերաբերյալ տեղեկացնում եմ, որ Ջրային

կոմիտեի 900011018521 հաշվեհամարից սեպտեմբերի 30-ին փոխանցված սուբսիդիայի գումարները <<Տավուշ>> և <<Լոռի>> ՋՕԸ-երի հաշվեհամարին արտացոլվել են բանկային օրվա վերջում, որի պատճառով ընկերությունները գործարքները իրականացրել են հոկտեմբեր ամսին:

3. Արձանագրության 18-րդ էջում նշված սուբսիդիայի պայմանագրերում նվազագույն շահավետ գնի չներառման վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 25.08.2016թ. նիստի **<<18. Ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին>>** N 33 արձանագրության հավելված 1-ի 4-րդ գլխի 17-րդ կետի 2019-2021թթ. համար ՀՀ կառավարությունը ՋՕԸ-երին դրամաշնորհների տեսքով (2019 թվականից սկսած տրամադրվում է սուբսիդիա տեսքով) ընթացիկ ֆինանսական աջակցություն տրամադրելիս 2019-2021 թթ. շարունակելու է առաջնորդվել ոռոգման ջրի ծավալի նկատմամբ կիրառվող վճարներով, մասնավորապես 2021 թվականի համար 12.5 դրամ, որը սակայն չի փոփոխվել և ներկայումս շարունակում է գործել 11 դրամ: ՀՀ կառավարության 25.08.2016թ. նիստի N 33 արձանագրությամբ սահմանված 12.5 դրամի և գործող 11 դրամի տարբերության չափով Ջրային կոմիտեն իր տարեկան բյուջետային հայտերով հիմնավորել է տարբերության չափով տրամադրվող սուբսիդիայի գումարների չափերը:

4. Արձանագրության 19-րդ էջում նշված 1004-12001 միջոցառման արդյունքային չափորոշիչ չնախատեսելու վերաբերյալ տեղեկացնում եմ, որ 30.12.2020թ. N 2215-Ն որոշման 9-րդ Հավելվածով 1004-12001 միջոցառման համար սահմանվել է <<Շահառու ոռոգման համակարգի ընկերությունների թիվ՝ 15>> արդյունքային ցուցանիշը և հիմքում դրվել է ՋՕԸ-երի կողմից էլեկտրաէներգիայի ծախսից առաջացած պարտքերը: Տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 13.05.2021թ. N 785-Ն որոշմամբ հաստատվել է <<Ոռոգման համակարգի ֆինանսական առողջացման աջակցության 2021 թվականի>> ծրագիրը, որի հիմքում դրվել է ՋՕԸ-երի կողմից էլեկտրաէներգիայի փաստացի ծախսը և կրեդիտորական պարտավորությունները:

Տեղեկացնում եմ նաև, որ հաշվի առնելով այն փաստը, որ ՋՕԸ-երին 1004-11001 և 1004-12001 միջոցառումներով տրամադրվող սուբսիդիայի գումարները համարվում են մեկ ընթացիկ

ճեղքվածքի մարման գործընթաց՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով այն դիտարկվել է, որպես մեկ ծրագիր՝ 1004-11001 << Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում>> ծրագիրը:

5. Արձանագրության 20-րդ էջում նշված հավաքագրումների մակարդակի վերաբերյալ՝ տեղեկացնում եմ, որ հավաքագրման մակարդակը կախված է տվյալ տարածաշրջանում, թե սեզոնում ջրօգտագործողների կողմից ինչ մշակաբույսերի տեսակներ է մշակվում և դրանց իրացումից հետո կատարվում է հասույթի հավաքագրում:

6. Արձանագրության 20-րդ էջում նշված 2021 թվականի արդյունքային ցուցանիշների պլանավորման և փաստացի կատարման հետ տեղեկացնում եմ, որ հաջորդ տարվա կտրվածքով արդյունքային ցուցանիշները պլանավորվում են նախորդ տարվա սկզբին, որի հիմքում դրվում է կանխատեսումային ցուցանիշներ՝ նախորդ տարվա ընթացքում կատարված ցուցանիշներին համապատասխան: Տեղեկացնում եմ նաև, որ յուրաքանչյուր տարվա եղանակային պայմաններից է կախված ջրի պահանջարկը, որը անկանխատեսելի է, որով էլ պայմանավորված տրվում է համապատասխան լուծումներ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ստեղծվել է միջգերատեսչական խումբ, որը պետք է քննարկվի և ներկայացնի ջրային ոլորտի զարգացման միասնական տեսլական ձևավորելու, ջրային ռեֆորմներ և ՀՀ ոռոգման համակարգի կայուն զարգացմանն ուղղված հայեցակարգը: Հայեցակարգի արդյունքով հնարավոր կլինի հստակեցնել ուղղությունները հետագայում նաև հնարավոր կլինի կազմակերպել ռազմավարության մշակման նպատակով խորհրդատուի ընտրության գործընթացը:

7. Արձանագրության 22-րդ էջում նշված ՋՕԸ-երի կողմից ներկայացված հաշվետվությունների և ջրի կառավարման GIS էլեկտրոնային համակարգում տեղադրված տվյալների միջև անհամապատասխանության վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ՋՕԸ-երի կողմից ջրի կառավարման ծրագրում էլեկտրաէներգիայի ծախսի տվյալները մուտք են արվել որոշակի ուշացումով, քանի որ անհրաժեշտություն է առաջացել ծրագրում կատարել մի շարք խորքային հորերի և պոմպակայանների պարամետրերի փոփոխություն, որից հետո կատարվել է տվյալների մուտքագրում: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ հաշվետվությունները տրամադրելու պահին Ջրային կոմիտեում գտնվող ջրի կառավարման ծրագրը ամբողջովին թարմացված չի եղել և ՋՕԸ-երի կողմից մուտք արված որոշ տվյալներ չեն արտացոլվել, որի հիման վրա և առաջացել է անհամապատասխանությունը: Ներկայումս տվյալները անբողջ ծավալով մուտքագրված են:

8. Արձանագրության 23-րդ էջում նշված Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև ստորագրված CAM 1002 06 D դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների մասով տեղեկացնում եմ, որ ներկայումս Համաձայնագրում դրամաշնորհային միջոցների մասհանման վերջնաժամկետների երկարաձգման մասով ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից 17.09.2021թ, ինչպես նաև իրականացնող մարմնի փոփոխության մասով Ջրային կոմիտեի կողմից 30.11.2021թ՝ համաձայն ընթացակարգերի, ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով ԶՖԳ-ին են ներկայացվել պաշտոնական հայտեր: Ներկա պահին համատեղ լրամշակման փուլում է գտնվում ծրագրի Գործառնական ձեռնարկը:

9. Արձանագրության 28-րդ էջից սկսած՝ ՋՕԸ-երի կողմից գարնան նախապատրաստական աշխատանքների իրականացման համար ընկերություններին տրված գումարների վերաբերյալ կից ներկայացնում եմ <<Արարատ>>, <<Արտաշատ>> և <<Արմավիր>> ՋՕԸ-երի կողմից ներկայացված պարզաբանումները և հիմնավորող փաստաթղթերը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ջրային կոմիտեի կողմից անդրադարձ է կատարվել ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքներին, որի հիման վրա կատարվել են համապատասխան ճշգրտումներ:

Առդիր՝ 1 արխիվացված ֆայլ:

Հարգանքներով՝

X

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ք. Աղվանյան

54-72-81